

# ԲԵՐԵՔ ԻՆԵՒ ԵԱՂԻԿՆԵՐ...



Առաւոտեան եղեմալից դաշտերէն  
Բերէ՛ք ինծի բըռնավըր,  
Անմահութեան վարդերու փունջ մը քընքոյշ՝  
Քաղուած սիրով մը փափուկ.



Թերթատեցէ՛ք պատկառանքով մը լըռին  
Դիւցազներու շիրմին վրայ.  
Անոնց բոյըերն ալ մեղմօրէն ցանեցէ՛ք  
Անմահներու հողերուն...



Բերէ՛ք ինծի բոսորացած դաշտերէն՝  
Արիւնաներկ յասմիներ,  
Յաւէրժօրէն պըսակելու պերճափայլ  
Կոյսերու սոնկը շիրմիներ:



Բերէ՛ք ծաղիկն որուն վրայ դեռ կը ցոլայ  
Մարգարիտն հայ քըրտինքին,  
Յօրինեցէ՛ք անով բրարիոն մ'անթառամ  
Պերճ գըլխուն հայ մըշակին:



Բերէ՛ք ինծի անմահունակ ծաղիկներ  
Սըփոել մանկանց շիրմին,  
Որոնց նըման հընձըւեցան քըրտօրէն  
Անոնց կեանքերն երազի...



Շուշաններու սպիտակ թերթեր ձիւնաթոյր  
Ցանեցէ՛ք հայ մայրերուն.  
Անոնց նեկտարն ալ ձօնեցէ՛ք ըղձակաթ  
Հայաստանի մասն...